

Ս. Ֆ. ԳՕՆՍԻԻԼԵԱՆ

# ՀԱԶԱՐՈՒՄԻԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ



1938

ԼՐԱՆ ՍՍՀՍԿ ՄԵՍՐՈՊ

Գահիրե

082  
9.77

Գ Ի Ն 1 Ե. Դ.

# ՆԵՐՍԷՍ ՉԱԳԸՃԵԱՆ ՈՐԴԻ ԵՒ ԸՆԿ.

ՄԷԼԻՔԷ ՓԵՐԻՑԷ ՀՐԵՊԵՐՍԿԸ (ՆԱԿԻՆ ԱՔԱՊԱ ԻԱՏՐԱ)

Փոստակի 502 ԳԱՀԻԲԷ Հեռաձայն 45362

## ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ

### ՅՈՒԷՏԱԿԱՆ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՒ



«ԲՐՈՒՄ» Կազի վառարաններ, Փուռեր, Լամբարներ  
եւ անոնց մասերը



«ԼՈՒՄ» Ելեհեռական լապսեր:

«ՕՐՔՈՒՄ» Շեղքեր:

«ՇՈՒՍԳՎԱՌՆԱ» Միսի՝ Պաղպաղակի, Կարի  
եւ Պարեզի մեխաններ:

«ՀԷԼԼԵՔՆԸ» Պարահամներ՝ գրգամի  
լապսերներու համար:



### ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՒՐԱՔԱՆՈՎ



032  
4-77 44

23 JUN 2009

## Ռդեցոյց կենցաղագիտութեան

«Քաղաքավարութիւնը դուտարն է  
հաղափարութեան»

**ՄԻ՝ ...**

**Բ.**

### ՋՂԵՍՏԱԻՈՐՄԱՆ ԵՒ ՈՒՆԱԿՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

ՄԻ՝ կրեր շքեղ և զարդարուն զգեստներ, եթէ այր մարդ ես: Այր մարդիկ ի՞նչ գործ ունին շքեղութեան և զարդարանքներու հետ: Կրնան ընտրել ճաշակաւոր և շնորհալի հագուստներ, բայց երբեք զարդարուն կամ շքեղ:

ՄԻ՝ լինիր անփոյթ՝ մաքրութեան նկատմամբ: Մարմնոյ թարմութիւնն ու գեղը անվթար պահելու միակ միջոցն է մաքրութիւնը:

ՄԻ՝ անտեսեր յարդարանքի նուազ ուշադրաւ մտաւերը: Շատեր, ծայրայեղօրէն կոկիկ կարգ մը առանձնայատկութեանց մէջ, վերջին ծայր անփոյթ են իրենց եղունգներուն մասին, որոնց տակ հաւաքուած փոշին ու աղտերը խիստ յռետեսիլ երեւոյթ մը կը պարզեն: Ակուններու մաքրութիւնն ալ ամէնօրեայ յարդարանքի մաս կազմելու է:

ՄԻ՝ թոյլ տար որ փոքր մազեր դուրս ցցուին քթափողերէն և ախանջի ծակերէն:

ՄԻ՝ մաքրեր ախանջը, մի՛ խառնէր քիթդ և ոչ ալ կարէ եղունգներդ երբ մարդոց մէջ կը գտնուես:

ՄԻ՝ ներկեր ճերմկած մազերդ: Ներկը բնականի պէս չընէր երբեւիցէ, և ոչ ոք կրնայ խաբել:

ՄԻ՝ քաշեր գլխարկդ մինչեւ ախանջներդ և ոչ ալ իջեցուր մինչեւ յօնքերուդ վրայ: Մին՝ նշանակ է գեղջկականութեան, իսկ միւսը՝ գոեհիւսութեան:

Մի՛ ելներ տուէն դուրս, առանց կօշիկներդ ներկելու:

Մի՛ քալեր դանդաղ և գլխիկոր, այլ քալէ՛ ուղիղ կեցուածքով ու հաստատուն քայլերով:

Մի՛ դներ ձեռքերդ զրպաններուդ մէջ, և ոչ ալ խօթէ մատներդ բաճկոնիդ կոճակի ծակերուն մէջ:

Մի՛ ծամեր ատամակրկիտդ երբ մարդոց մէջ կը գտնուիս, և ոչ ալ երկար տտեն բերանիդ մէջ պահէ զայն: Ատամակրկիտներ՝ իրենց նպատակին ծառայեցընելէ անմիջապէս վերջ նետուելու են: Նսեւ, մի՛ ձծեր սկռաներդ:

Մի՛ նետեր խուխ (պալկամ) տաքին անդին: Քաշառողջ մարդիկ խիելու բնաւ պէտք չունին: Խուխաբերութիւնը շատեր ունակութիւն ըրած են պարզապէս: Զգուշացի՛ր այս ագեղ ունակութենէն:

Մի՛ սուլեր փողոցներու, հանրակառքերու և հասարակաց վայրերու մէջ: Բնաւ չի սուլել լաւագոյն է բարեկերթ մարդոց համար:

Մի՛ արձակեր գռեհիկ քրքիջներ: Խնդա՛ լիաթօք, եթէ պէտք կայ խնդալու. գռեհկութենէ սակայն զգուշացիր:

Մի՛ խնջեր քիթդ այլոց ներկայութեան, եթէ հնարաւոր է: Կան մարդիկ որոնք խնջելու գործողութիւնը կը կատարեն իրենց մատներով՝ զգուանք պատճառելով դիտողներուն:

Մի՛ ունենար շրթներդ կախելու և կամ բերանաբաց մնալու ունակութիւնը: Բաց բերանը ոչ միայն փաստկար է սկռաներուն և ընդհանուր առողջութեան, այլև նշանակ է նկարագրի տկարութեան:

Մի՛ բանար դուռ մը առանց զայն նախապէս բախելու: Պէտք է յորդիս բարեկամիդ առանձնութիւնը, եթէ նոյնիսկ խիստ մտերիմ էք իրարու հետ:



# Դասընթացք էլեկտրականութեան

Գ. ԱՌԻՒ Բ.

## ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ ՀՈՍՍՆՔ, ԾՆՇՈՒՄ ԵՒ ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆ

55  
1  
8  
3  
7  
6

Նախորդ դասերուն մէջ խօսեցայ հաղորդիչներու, անջատիչներու, կշռական (անշարժ) և հոսուն ելեքտրականութեան մասին: Ըսի նսեւ թէ մեզ ամենէն աւելի հետաքրքրողը հոսուն կամ վազուն ելեքտրականութիւնն է, վասնզի ան է որ կը լուսաւորէ մեր տուները և շարժման մէջ կը դնէ վիթխարի մօթէօրները, եւն: Կշռական և կամ շփմամբ ելեքտրականութիւն արտադրող մեքենաներ ի պատուի էին տտենօք պարզ այն պատճառաւ որ՝ անոնք կ'աշխատցնէին X ճառագայթի մեքենաները: Այսօր, սակայն, աւելի լաւ և հանգիստ կերպով կ'աշխատցուն անոնք հոսուն ելեքտրականութեամբ, որով կշռական մեքենաներու դերը սահմանափակուած է միմիայն լապտաթուարներու մէջ, ուր սառեւել հետաքրքրութիւն կ'արթնցնեն քան այլուր:

### ՀՈՍՈՒՆ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՐՏԱԴՐԵԼՈՒ ԿԵՐՊԵՐ

Ելեքտրական հոսանքը թելի մը մէջ հոսեցնելու համար կան մէկէ աւելի կերպեր.— Ելեքտրական խորշի (cell) մը միջոցաւ, ճնուցիչի կամ ելեքտրական ոյժ արտադրող մեքենայի (electric generator) մը միջոցաւ և ջերմեկեքտրական փոկի մը միջոցաւ: Խորշը կախեալ է քիմիական գործողութենէ, կարենալ արտադրելու համար ճնշում մը որ կը հոսեցնէ հոսանքը: Ծնուցիչը կախեալ է մագնիսական դաշտի մը մէջէն անց-

նող հաղորդիչներէ՛ Իսկ ջերմելեքտրական փոկը կտխեալ է զանազան նիւթերէ շինուած հաղորդիչներու ջերմութենէն: Փոկ կը կոչուի այն կէտը ուր կը միանան երկու մետաղները և այս այն կէտն է դէպի ուր կը դիմէ ջերմութիւնը:

Խորշը և ծնուցիչը բացատրելու համար գացած չեմ մանրամասնութեանց պարզ այն պատճառաւ որ՝ պիտի անդրադառնամ անոնց յաջորդ դասերուն մէջ: Ջերմելեքտրական փոկը, իր նուազ արդիւնադործութեան պատճառաւ, չի գործածուիր իբր միջոց մեծ քանակութեամբ ելեքտրականութիւն արտադրելու համար: Ան կը գործածուի սակայն չափելու համար բարձր ջերմութիւններ այնպիսի հնոցներու մէջ, ուր հնարաւոր չէ գործածել սովորական ջերմաչափներ: Ջերմելեքտրական փոկի մասին ձեզի այսքան ծանօթութիւն տալէ վերջ տարակոյս չունիմ թէ պիտի կարողանաք գիտնալ թէ ի՞նչ է հրաչափ (Tyrometer) կոչուած գործիքը: Հրաչափ ըսուածը ոչ այլ ինչ է բայց եթէ ջերմելեքտրական փոկ մը՝ կցուած զգայուն վոլթմէթրի մը կամ գալուանաչափի մը՝ որ փոխանակ վոլթեր չափելու, կը ցուցնէ ջերմութեան աստիճանները:

**ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ**

Ելեքտրական շրջան ըսուածը ճամբայ մըն է, որուն մէջ ելեքտրական հոսանք մը կը հոսի: Ջուրի շրջանն ալ ճամբայ մըն է որուն մէջ ջուրը կը հոսի: Եւ որովհետեւ ելեքտրական հոսանքը և ջուրը կրնան շատ մը կերպերով համեմատուիլ իրարու հետ, պիտի ջանամ գործածել ջուրի շրջանը կարենալ յստակ և մեկին կերպով ձեզի բացատրելու համար թէ՛ հոսանք մը ի՞նչպէս կը հոսի շրջանի մը մէջ:

**Դասընթացքի տեսակետներէն  
և պերճախօսութեան**

ԳԼՈՒԽ Գ.

«Ճարտասանութիւնը գմեղտեր կը կացուցանէ ուրիշներու սրտին ու մտքին»

**ՄԵՁ ՊԻՏԻ ԶԲԱՂԵՑՆԵՆ ՆԱԽ՝ ՎԱՆԿԵՐԸ**

Ոսող մը որպէսզի լաւ հասկցուի իր ունկնդիրներուն կողմէ, պէտք է արտասանէ վանկերը խիստ մաքուր և որոշ կերպով: Ինչպէս սովորական խօսակցութեանց մէջ նոյնպէս և բնմերու վրայ երբ կարգ մը մարդիկ դժուարաւ կը հասկցուին, պատճառը այն է որ խիստ արագ կը խօսին անոնք և ասոր իբր անմիջական հետեւանք կուլ կուտան վանկերը, առանց իրենց գիտակցութեան:

Այս հիւանդագիրն երեւոյթը բուժելու առաջադրութեամբ՝ ստորեւ կուտանք խօսելովարժութեան օրինակ մը, որուն մէջ մի վանկը ամենայն հանդարտութեամբ, լման և անքերի կերպով արտասանելու ջանողի պէտք է ըլլայ աշակերտը, ոչ աւելի քան 3 վայրկեանի մէջ միայն: Այսօրինակ ընթերցում մը նախապէս տարօրինակ պիտի հնչէ թերեւս ձեր ականջին, պէտք է սակայն միշտ աչքի առջեւ ունենաք ձեր նպատակակէտը, որ է՝ վանկերը հանդարտօրէն և անքերի կերպով արտաբերել սորվիլ:

**ԽՕՍԵԼԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ**

Դըրա-մա-գը-լուխ, ուժ և ժա-մա-նակ, ա-ռե-տու-րի մէջ գործած-ուե-լու են իր-րեւ ա-ռե-տըր-ու-կան հա-մա-զօր ինչ-քեր, և ա-նոնց գործածու-

Թեան չափերը որոշուելու են մի-եւ-նոյն ըսկըզբունքով: Մենք կը փոր-ձըլ-ինք զը-րա-մը զը-նա-հա-տել աւել-լի քան միւս ինչ-քերը, որով-հետեւ զը-րոշ-մը-ւած ոսկի-ին և ար-ծա-թին ար-ժէ քը ե-րաշ-խա-ւոր-ուած է կա-ռա-վա-րու-թիւն-հե-րու ձեռ-քով, իսկ ժա-մա-նա-կին ու-ժին ար-ժէ-քը՝ բո-լոր միւս չե-րաշ-խա-ւոր-ուած ապ-րանք-նե-րուն պէս՝ ձըզ-ւած է ան-հատ-նե-րու դա-տո-ղու-թեան: Ճիշդ այս պատ-ճա-ռով է որ ե-րաշ-խա-ւոր-ուած մե-տա-ղը աւել-լի ուժ կը ներ-կա-յայց-նէ քան չե-րաշ-խա-ւոր-ուած ծը: Ի-մաս-տուն ա-ռեւ-տը-րա-կան մը ա-զա-տելու է իր դա-տո-ղու-թիւնը այս դա-րա-ւոր նա-խա-պա-շա-րու-մէն և սոր-վելու է զը-րա-մը գոր-ծա-ծել իւր-եւ ինչք՝ տա-լով ա-նոր իր պատ-շաճ պատ-իւրը, ոչ աւել-լի և ոչ պա-կաս (\*):

**Գ Ի Բ Ե Ր Ը**

Գեղեցիկ և հասկնալի խօսելու համար միայն վանկերն անթերի արտասանելը բաւական չէ. վանկերը կազմող գիրերն ալ արժանի են մեր ուշադրութեան: Երկու տեսակ գիր կայ. ձայնաւոր և բաղաձայն: Ձայնաւորներ, որոնք առանձինն՝ առանց ուրիշ գիրերու

(\*) Այս եւ համանման հասուածներ, ընտրուած որեւէ գրէ, պէտք է կարգաւ մի քանի շաբաթներ, ի պահանջել հարկին մի քանի ամիսներ ամէն օր բարձրաձայն, կամաց կամաց եւ կանգ առնելով իւրաքանչիւր վանկի վրայ, նամանաւանդ բառին վերջին վանկին վրայ: Այս կերպով՝ հանդարտ խօսիլը եւ վանկերը հասիկ-հասիկ արտասանելը ունակութիւն պիտի ըլլայ ձեզի: Վարժութեամբ ձեռք ձգուած առողջութեան այս ձեւը ամենօրեայ խօսակցութեանց մէջ ալ գործածելու է հաւասարմաբար:

օգնութեան ձայն կրնան հանել, կարի իրաւամբ կոչուած են լեզուին կեանքը, իսկ բաղաձայնները՝ որոնք միայն ձայնաւոր գրի օգնութեամբ ձայն կրնան հանել, կոչուած են լեզուին շղարշը կամ հանդերձը: Ինչպէս որ մարմին և հոգի միանալով կը կազմեն քաջաւոր մարդը, նոյնպէս ալ ձայնաւորներ և բաղաձայններ քով քովի գալով կ'արտադրեն մարդկային հրաշալի լեզուն, պայմանաւ որ՝ հնչուին անոնք քերականական և ձայնադրական կանոնաց համաձայն:

Ձայնաւորներ, ա. ե. է. ը. ի. ո. ւ. օ, պէտք է հնչուին կարելի եղածին չափ յսակ և որոշ կերպով: Օր. — Աչակերտ. — Աւազան. — Ժամանակ. — Եկեղեցի. — Բարեկամ. — Ազգ. — Գրիգոր. — Եփեսոս, և այլն:

Բաղաձայններ, բ. գ. դ. թ. ժ. լ. խ. ծ. կ. հ. ձ. ղ. ճ. մ. յ. ն. շ. չ. պ. ջ. ո. ս. վ. ա. ը. ց. փ. ք. պէտք է հնչել կարելի եղածին չափ զօրաւոր և սուր կերպով: Օր. — Եւր'ոպ'ա. — Եր'ու'սող'էմ'. — Խ'ա-ւար'. — Ծ'ն'ոզ'. — Լ'եզ'ու. — Փ'ու'ք'. — Կ'ամ'ք'. — Զ'ար'մ'ան'ք', և այլն:

Բաղաձայններ ստամանուած են ըլլալու լսատակը (եարու իսկէլէսի) ձայնաւորներու, որոնց յստակութեան հետ իրենց սրութիւնը ընդելուզելով միայն՝ կրնան կատարելագործել հնչումը և բիւրեղացնել էութիւնը լեզուին: Ճարտասանութեամբ այլոց սրտին ու մտքին տէր կարենալ ըլլալու համար, պէտք է նա'խ տէր ըլլանք մեր լեզուին, որուն մէջ այնքան յստակ-օրէն կը հայեկիացնենք մեր իսկութիւնը:

Շատ պատշաճութեամբ ըսուած է.

Ինչպէս ոսկին իր ձայնէն,  
Եւ թոչուեր իր երգէն,  
Նոյնպէս ալ մարդը կը հանչուի իր լեզուէն:

### Դեռահասաներուն

ՏՍԱՆԱԲԱՆԵԱՅ ՊԱՏՈՒԻՐԱՆ ՀԱՐՍՆՅՈՒ ԱՂՋԻԿՆԵՐՈՒ

(Օրհորդի մը մասնաւոր խնդրանքից վրայ, Տօքթ. Ֆրեյն Բրեյն հետեւեալ կանոնները տուած է երիտասարդունիներու, ինքզինքնին երիտասարդներու հրապուրելի բնծայելու համար:)

1.— Ամենէն առաջ յիշեցէք թէ կայ բան մը որ զզուելի է բոլոր մարդոց—այր մարդիկ բացառութիւն չեն,— այն է եսութիւնը, հետեւաբար եթէ կ'ուզէք երիտասարդները ուժացնել ձեզմէ, ինքնահաւան եղէք և ձեր Եսը շեշտեցէ՛ք միշտ:

2.— Եթէ կ'ուզէք երիտասարդներու ուշադրութիւնը գրաւել և անոնց համակրելի ըլլալ՝ անձնասէր մի ըլլա՛ք: Անձնասիրութիւնը, ի հարկէ, ետեւեան մէկ ձեւն է. կրնաք նախապէս այնքան մը գրաւել ըլլալ որ չիտառելիք անկէ, սակայն անձնասիրութիւնը ի վերջոյ կը խաթարէ սէրը:

3.— Կամաք խօսեցե՛ք: Յիշեցէք թէ ցած ձայնը կնոջ մէջ գերընտիր յատկութիւն մըն է. բարձրաձայն ո՛չ խօսեցէք և ո՛չ ալ խնդացէք. ձեր փնտռած երիտասարդը ապահովաբար անպարկեշտութենէ հրապուրուողը չէ:

4.— Բարի եղե՛ք: Ասիկա կրօնական կամ բարոյական տեսակէտէ չէ որ կ'ըսեմ, այլ պարզապէս հակառակ սեռը հրապուրելու համար: Թերեւս չէք գիտեր, կամ թերեւս գիտէք, և իբրեւ անարդարութիւն կը զայրացնէ զձեզ սա իրողութիւնը թէ ո՛չ մէկ երիտասարդ կը սիրէ օրիորդ մը եթէ չխորհի թէ նա իրմէ աւելի լաւ է:

5.— Մի՛ ջանա՛ք անակնկալներով ցնցել զհարկերը: Ասիկա կրնայ յուզում յառաջ բերել և անոնց ուշադրութիւնը դէպի ձեզ գրաւել, սակայն սուղի կը

նստի և վերջը դուք կ'ըլլաք խաղի մէջ կորսնցնողը: Արկածախնդիր պատմութիւններ մի՛ պատմէք: Սիկարէթ մի՛ ծխէք:

6.— Համեստ եղե՛ք: Հօկեցէք ձեր պարկեշտութեան վրայ և փարեցէք ձեր անձնական արժանապատուութեան. անպատեհ դիտողութիւններու վրայ մի՛ քմծիծաղիք: Մի՛ թոյլարէք որ տղաք իրենց ձեռքը ձեր վրայ դնեն: Յիշեցէք միշտ թէ ձեր ամենավերջին պատնէշը և ձեր ամենագլխաւոր միջոցը ձեր անձին սրբութեան մէջն է:

7.— Ծանրաբարոյ եղե՛ք: Անտեղիօրեմ ամչկոս մի՛ ըլլա՛ք: Վիրաւորիչ խօսքեր և արարքներ մի՛ փնտռէք երբ անոնք գոյութիւն չունին, և անտեսեցէք զանոնք երբ գոյութիւն ունին: Քաղաքավար և նպաստաւոր արտայայտուեցէք, յարմարեցէք. լաւ ընկերակից եղէք:

8.— Առողջ եղե՛ք: Բացօդեայ աղջիկ եղէք: Տղաքներ կը գրաւուին աղջիկներէ որոնք ոչ թէ միտայն կանացի են, այլ նաեւ վառվառն, կենսունակ և զօրաւոր: Իրենց փաթթուող որթատունկերը նախընտրող տղաք, ընդհանրապէս բռնաւորներ կը դառնան վերջէն: Շիտակ մարդը իրեն հաւասար մը և բարեկամ մը կը փնտռէ:

9.— Ամէն բանէ աւելի զուարթ եղե՛ք: Զեր ուշքերուն մէջ կայծ մը ունեցէք և ձեր բերանին անկիւնները դէպի վեր պահեցէք, լաւատես և խանդավառ եղէք. ամէն ոք կը սիրէ արեւը: Տղաք առհասարակ մեղամողձոտ են և աղջիկը որ անոնց կոչում կ'ընէ, մեղամողձոտ չեղողն է:

10.— Զգայուն մի՛ ըլլա՛ք: Եւ եթէ զգայուն էք, մի՛ ցուցնէք:

Այս բոլոր կանոնները պահեցէք և եթէ տակաւին չյաջողիք տղաքը հրապուրել, զիս մի մեղադրէք, ես իմ լուսադոյնս ըրի:

## Տանկիկնոց բարեկամք ԽՈՂԱՆՈՑԷՆ ՆԵՐՍ

### ԱՊՈՒՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ

1.— ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ՀԱՅՍԻ (եհերիյե) ԱՊՈՒՐ. 100 արամ արփա չէ՛րիյէսին խաշելէ յետոյ պաղ ջուրէ անցուր, ջուրը քամէ: Մէկ օխա մսի ջուր դիր. խառնէ՛ և մէկ քառորդ ժամ եփէ՛ և վերստին ջուրը քամէ: Ամանին մէջ լեցուր և պէտք եղածին չափ նորէն տաք մսի ջուր լեցո՛ւր:

2.— ՀԻՒՆՔԵՍԱՐԻ ԱՊՈՒՐ.— 10 ստեպղինին միայն կարմիրները քերիչով (րէնտէ) մանրցո՛ւր, 3 գըլուխ սոխ, քիչ մը կարոսի արմատ, և երկու պրաս ջարդէ, կտոր մը կարապով կէս մը կարմրցուր, մսի ջուր դի՛ր, քիչ կրակի վրայ քաշէ՛, չէրէփով (քէփչէ) լաւ մը խառնէ՛, փրփրցո՛ւր, և մանր ջարդուած ու իւզով տապկուած հացի կտորներ դի՛ր: Այս ապուրը ձմեռուան համար է, ստեպղինին տեղը շողգամ կամ սլոռն (պէզէլիս) և թարմ լուբիս կրնայ դրուել:

3.— ԲԱՆՋԱՐԵՂԷՆԵՐ ԱՊՈՒՐ.— Բաթաթէս, քառօղ, քէրէվիզ, կաղամբ և կամ ուրիշ բանջարեղէններ ուլունկի խոշորութեամբ մանրելէ յետոյ մսի ջուրով լաւ մը եփէ՛ և կամ կարապ իւզով, եթէ մսի ջուր չկայ:

### ԱՐԳԱՆԱԿՆԵՐ (խաւամա)

1.— ԿՈՎՈՒ ՄԻՍԻ ԱՐԳԱՆԱԿ.— Մէկ օխա խաշած միսը թերթ թերթ կտրէ՛, իւզերը հոնէ՛, պղինձ ափսէի մը մէջ շարէ՛, աղ և պղպեղ ցոնէ վրան: 15 արամ սոխ (սոխի ապուրի եղանակաւ պատրաստէ՛ և մինչեւ որ կարմրի եփէ՛), 10 արամ ալիւր,

քիչ մը աղ ու պղպեղ աւելցո՛ւր, հինգ վայրկեան եւս եփէ՛ խառնելով. մէկ սուրճի դգալ մանանեխ (հարտալ) աւելցո՛ւր ափսէին մէջ եղած միսին վրայ, լեցուր և 20 վայրկեան թո՛ղ որ վրան ու ներքեւը եփի՛:

2.— ԿՈՎՈՒ ՈՒՂԵՂԻ ԽԱՇԱԾ.— Ուղեղը չտարտղնելով վրայի հաստ մորթը հոնէ՛ և մէկ ժամու չափ ջուրը ձգէ՛. յետոյ սանի մը մէջ մէկ օխա ջուր և 2 ապուրի դգալ քացախով կէս ժամու չափ խաշէ՛:

3.— ՊՕՅՈՒՆ ԽԱՇԼԱՄԱՍԸ ՍԷՕՅԻԻՇ.— Ոչխարին վզի մասը սանի մը մէջ եփէ՛, քաշէ՛ պնակը, աղ ու պղպեղ ցոնէ՛, կե՛ր:

Ասոր պէս կ'ըլլան սեօ խաւամասը, ճիկեր, Ֆիլեթո և պեղօլա խաւամաներ:

### ԲԱՆՋԱՐԵՂԷՆԵՐ (Միսով)

Ընդհանրապէս բանջարեղէնները միսով եփուած տան, պէտք է միսը մանր ջարդել, կա՛մ իր իւզով և կա՛մ կարապ իւզով և քիչ մը բարակ ջարդուած սոխով խորովելէ ետքը, քիչ մըն ալ թարմ լոլիկով կամ ջրովը խաշել: Յետոյ պէտք է նայիլ թէ միսին վրայ ձգուելիք կանանչեղէնը կա՞րծր է թէ փափուկ, որպէսզի կարելի ըլլայ միսն ու կանանչեղէնը հաւասար եփել: Ուստի այսպէս միսը խորովելէ ետքը բանջարեղէնը միսին վրայ պէտք է ձգել ու եփել: Կան բանջարեղէններ, զորոնք պէտք է առաջուց խաշել ու յետոյ միսին վրայ ձգել:

1.— ՄԻՍՈՎ ՇՈՄԻՆ (Սպանագ): Արմատները զատէ՛, մաքրէ՛, խաշէ՛ և պարզուտի մը մէջ լեցնելով, անոր վրայ պաղ ջուր լեցո՛ւր: Յետոյ կիսեփ միսը վրան ձգէ՛ ու եփէ՛:

2.— ՄԻՍՈՎ ԲՐԱՍՍ.— Միսը կտոր կտոր ըրէ՛, սանի մը մէջ կարմրցո՛ւր և վրան քիչ մը սալցա վար֊  
ժեցո՛ւր ու պատրաստ բրասան վրան լեցնելով լու մը  
եփէ՛, չմոռնաս աղ և պղպեղ դնել:

### ԽՄՈՐԵՂԷՆ-ԱՆՈՒՇԵՂԷՆՆԵՐ

ԱՅ ՊՍԳԼԱՎԱՍԸ.— Պարզ պազլավոյի պէս խը֊  
մորը կը բռնես: Նախ երեք թերթ կը բանաս, իւրա֊  
քանչիւրը իւզոտելով և պատրաստուած միջուկէն վը֊  
րանին տեղաւորելով, իրարու վրայ կը շարես: Յետոյ,  
չորս մատի լայնութեամբ քանակի նման օղլավ մը  
խմբուած թերթերուն վարի ծայրէն դնելով, առանց  
միջուկները թափելու կը դարձնես և կը ծալլես: Սոյն  
գործողութիւնը կատարելէն վերջ, շատ սուր դանակով  
մը չծալլուած եզերքէն վերէն վար կտրէ՛, օգլավան  
մէջէն կամաց մը դուրս քաշէ՛, մնացեալն ալ նոյն ձե֊  
ւով պատրաստէ և ահա կ'ունենաս չորս մատի հաս֊  
տութեամբ փաթթուած ու լեցուն թերթեր:

Բարակ եզերք ունեցող ջուրի դաւաթ մը ա՛ռ,  
թերթին վրայ ուժով կոխելով լուսնի ձեւով կտրէ՛ ու  
յատակը լաւ իւզոտուած ափսէին մէջ քովտաի շարէ՛,  
հալած իւզը վրան անցո՛ւր և փուռը տո՛ւր:

Եփելէն վերջ, խըվամ չաքարը անցո՛ւր:

Այս պազլավան գոյմագլը ընելու համար պէտք է  
եզերքները բանալ ու մէջտեղերը գոյմագ դնել:

## ԸՆՏԱՆԵԿԱՆ Բառարան

### ՁԻԹԱԻՒՂԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ձիթաիւղին յարգարանքի գործածութիւնները. —  
Ձեռքերը ձերմակ և կակուզ պահելու համար՝ տաք

ձիթաիւղի մէջ խոթելու է անկողին երթալէ առաջ:  
Աղէկ մը չփելու է մինչեւ որ մորթին մէջ անցնի իւ֊  
ղը, և ապա հին ձեռնոցներով քնանալու է մինչեւ ա֊  
ռուտու: Երկու կամ երեք գիշերներ այսպէս շարունա֊  
կելէ վերջ՝ շօշափելի արդիւնքներ պիտի տեսնես:

Արեւակեզ և պիտակոտ դէմքերու համար սքան֊  
չելի դարման մըն է ձիթաիւղի և լիմոնահիւթի խառ֊  
նուրդը:

Կոշեք (նասըր) կ'անհետին, եթէ ձիթաիւղի մէջ  
թրջուած լաթի կտոր մը դնես վրան:

### ՕԹԵԿ (պայաք) ՀԱՅՆ ԹԱՐՄԱՑՆԵԼ

Սանի (թէնճիրէ) մը մէջ ջուր լեցնելով, զօրաւոր  
կրակին վրայ դրէք. նոյն սանին կափարիչը հակառակ  
կողմէն գոցեցէ՛ք, անոր վրայ դրէ՛ք օթեկ հացը և  
ուրիշ սանի կափարիչով մը ծածկեցէք. եռացող ջրոյն  
չոգիին միջոցաւ քառորդէ մը կամ 20—25 վայրկեա֊  
նէն մէկ քանի օրուան օթեկ հացը բամպակի պէս կը  
կակուղնայ. յետոյ զայն կակուղ անձեռոցի մը մէջ  
փաթթած՝ տեղ մը դրէք որ պաղի. պողելէն մէկ քա֊  
ռորդ ժամ ետքը գոհացուցիչ արդիւնքը կը տեսնէք:  
Հարաւային Պուլկարիոյ գիւզացիներուն մէկ մասը  
ձմեռ ժամանակ այս գործողութեան կը դիմեն՝ թար֊  
մացնելու համար իրենց օթեկ հացերը: Պէտք է գիտ֊  
նալ թէ՛ այս կերպով թարմացած հացը կէս ժամ չան֊  
ցած ուտելու է, զի, պողելէն կէս ժամ ետքը բոլորո֊  
վին կը կարծրանայ: Հացագործներ թերեւս տեղեակ  
են այս գործողութեան, բայց կէս ժամուան միջոցին  
ծախել չկարենալու երկիւղէն է անշուշտ որ ձեռքեր֊  
նին մնացած օթեկ հացերը չեն համարձակիր թար֊  
մացնել:



## Հայ մայրերուն

### ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

#### ՏՈՒՆՆ ՈՒ ԴՊՐՈՑԸ

Ըստած ու գրուած է, և այսօր ամէն ոք իբր բարձրակ ճշմարտութիւն կ'ընդունի թէ մանկան՝ տանը մէջի կեանքն է աւելի նկատառելի և ուղղելի քան դպրոցականը, որովհետեւ տղան իր լեզուի ու բարքի առաջին վանկերը տանը մէջն է որ կը սորվի և ոչ դպրոցին: Կ'արժէ ուրեմն, այդ խիստ կենսական և փափուկ հարցին վրայ գրել, գրել միշտ, մինչև որ սերունդը սկսի իր սխալը ճանչնալ և զայն դարմանել:

Ո՞վ ըսաւ որ ուսուցչին պատուէրը աւելի շատ կ'ազդէ տղուն վրայ քան մօրը կամ հօրը, և հետեւաբար դպրոցին՝ քան տան. տղան եթէ կ'ենթարկուի ուսուցչին կամ ուսուցչուհիին, պատճառը սա է որ նա կը հաւատայ ու գիտէ թէ իր մայրը և հայրը կը յարգեն զայն:

Դպրոցը կը պատուիրէ տղուն չհայտնել, չի ստել, անվայել ընթացքի մէջ չգտնուիլ եւն. եւն: Տղան երբ տուն կ'երթայ, կը լսէ իր մօրը, հօրը, եւայլն հայհոյութիւնները, ուսուցչին խօսքերը անմիջապէս օղբ կը ցնդին. ի՞նչ եղաւ արդիւնքը — դպրոցը՝ դրական և տունը՝ ժխտական, մինչդեռ այդ երկուքը իրարու լըրացուցիչներ պէտք էին ըլլալ. և քանի որ մենք գիտենք թէ «մարդիկ ի մանկութենէ հաստատեալ կան ի խնամս չարին», ապա ուրեմն, չարը պիտի յաղթանակէ, ժխտականը պիտի յառաջանայ, և անա լաւ անձ մը

ունենալու տեղ, հայհոյող և անկիրթ դպրոցական մը կ'ունենանք:

Պէտք չէ մեղադրել դպրոցը տղուն այս կամ այն յոռի վարմունքին համար, որի միակ պատասխանատուն ՏՈՒՆՆ է եւ ոչ դպրոցը, և քանի որ տունը չէ դաստիարակուած ու կը մնայ իր անբողձալի վիճակէն մէջ, դպրոցը ապահովաբար մեծ դեր չի կրնար կատարել:

Լաւ կ'ընտան զաւակ ունենալ ցանկացողը իր տղան դպրոց դնելէ առաջ իր տունը դպրոց կը դարձնէ, ստեղծելով հոն կանոնապահութիւն, բացարձակութիւն, հաւատք, որոնցմով միայն կարելի է բաղձացուած արդիւնքին հասնիլ:

#### ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ ՏԱՆ ՄԷՋ

Մայրեր կարելի եղածէն աւելի աշխատելու են որ ընտանեկան կեանքը ըլլայ ներգաշնակ և խաղաղաւէտ: Զուլակներուն առջեւ ինքզինք զսպել գիտնալը գեղեցկագոյն առաքինութիւնը և կարողութիւնն է մօր մը: Գիտնալու է թէ աղաք շատ սուր դիտողներ են, միայն թէ կարողութիւն չունին իրենց դիտողութիւններէն լաւ հետեւանքներ հանելու: Տղոց աչքերն ու ականջները երբեք լսելու չեն մանաւանդ իրենց ծնողաց բռուն կռիւի տեսարանները, որոնք շատ խոր կերպով կը տպաւորեն մանկական սրտին ու մտքին վրայ և կը դառնացնեն անոնց մանկական զըլարութիւնը: Մտողներուն կռուի տեսարանները տեւականորաբար տխուր արամադրութիւն մը կը գոյացնեն լուրջ բնաւորութեան տէր տղոց վրայ. թեթեւամիտ աղաք ալ այդպիսի տեսարաններէ կը քաջալերուին յարգանք ու պատկառանք չունենալ իրենց ծնողաց հանդէպ:

# Տեսական դեդուկտիվ

ՔՐԻ ԱՐԻԻՆՍԱՆՈՒԹԻՒՆ

Քրիթիկն արիւն հոսող անձը եթէ բերանը ամուր մը գոցելով խորունկ շունչ առնէ քրիթիկն և անմիջապէս մատներովը քրիթը սեղմելէն ետքը, սկսի բերնէն շունչ առնել, քրիթին արիւնը կը դադրի հոսելէն: Պատճառը բնախօսական է: Պէտք ունեցողը այս միջոցը թող փորձէ:

## ՏԿԱՐ ՍՏԱՄՈՒԲՍ

Ստամոքսի խանգարում 24 ժամ ծոմով կը բուժուի: Այս պարզ, բայց օգտակար միջոցը յանձնարարելի է անոնց՝ որոնց ստամոքսը կանոնաւոր չաշխատիր և միշտ կ'ըմբոստանայ, գլխաւորապէս անոնց, որոնք շատ ջուր կը խմեն ճաշերու միջեւ: Ծանր հարբուխի ատեն ջրալից ուտելիք և ունէ հեղուկ անդեղէնէ հեռու մնալը շատ հազուադէպ է, որ ենթակայ եղողին օգտակար չըլլայ:

Մարսողութեան տկարութիւնը կը բուժուի, նաեւ, ճաշէ և պառկելէ առաջ կէս թէյի դգալ էիմիոն ուտելով և վրայէն գաւաթ մը ջուր խմելով:

## ՊՏՈՒՂՆԵՐԸ

Խիստ մեծ է պտուղներու օգտակարութիւնը, եթէ ըստ պատշաճի գործածուին:

Խնձորը ոչ միայն սքանչելի արիւն կը մաքրէ, այլ նաեւ Տիգանբրին կը բուժէ:

Օրը 3 անգամ լոկ չոր հացով խաղող ուտել տաղակալի պիտի թուի: Սակայն հրաշք կը գործէ հիւժեակ, ջղային և անարիւն անձերու համար, որոնց

մարտողութիւնը ունէ պատճառաւ, մոնաւանդ չափազանց յոգնելով և հոգերով, խանգարուած է:

Յօդացաւ ունեցողները օրը գոնէ 2 ընկոյզ թող ուտեն:

Լիմոնն ալ խիստ օգտակար է յօդացաւի Օրտկան 5-6 թարմ լիմոն ջուրի մէջ քամելով խմեցէք:

Ջերմի մէջ ոչինչ կրնայ լիմոնի թթու հիւթին հաւասարի: Լիմոնը քիմիկն ալ յատկութիւնը ունի և տաքութիւնը կ'իջեցնէ: Պաղատութիւնը անցնելու համար ալ լիմոնը եզական է: Չուտ լիմոնի հիւթը զըլխացաւի օգտակար է:

## Ք Ա Յ Ա Խ

Քացախն իբր ընտանեկան դեղ մեծ դեր կը կատարէ, երբ մարդ, ի մէջ այլոց, մարմնոյն մէջ կոտորածութիւն մը զգայ, լաւ է քացախով չիկել ողնայարը: Նոյնպէս երբ օրը քանի մը անգամ քացախախառն ջուրով մարդ ցողուէ ու լուա բերանը, ակոսներուն ու կոկորդին մէջ գտնուած յեխիչ ու փտտած մասերը կը հեռացնէ անկէ:

## ԱՉՔԻ ԽՆԱՄՔ

Աչքի մէջ մտած օտար մարմինները հոնելու համար պէտք է մի քիչ խիստ մաքուր ձիթաիւղ կաթեցընել աչքին մէջ: Փոշի, մոխիր, կիր և այլ բոնեք շուտով դուրս կ'ելլեն այս միջոցով, որ թէ՛ անվնաս է և թէ՛ անվրէպ:

## ՄԱՆԿԱՆՑ ՈՒՏԵՍԸ

Տղայ մը պարտաւորեցնելու լաւ եղանակ մըն է ասի անոր ամէն ճաշի ատեն օթեկ կամ խորոված պաղ հաց, որուն վրայ քսելու է ընտիր կարմիր վրան աղ

55  
8  
373955



ցանուած. կարագը կը պարարտացնէ, աղն ալ՝ նմանապէս, որովհետեւ ջուր խմցնել կուտայ: Իրրեւ ըմպելիք՝ կաթ տուէք: Կաթը ստամոքսի ընդլայնումի տեսն միայն անպատշաճ է. այս հիւանդութիւնը յաճախաբէպ է նոյնիսկ մեր աղոց մէջ: Կաթեղէն կերակուրներու մասին՝ եփուած սեր, կաթով հաւկիթ, խառնուած սեր լաւ են: Ասոնց մէջ երբեք ըմպելիք խառնելու չէ, ո՛չ ալ համեմներ՝ քիչ մը կիտրոնի իսկութենէ կամ նարնջենիի ծաղիկէ զտա: Երբեք մի՛ տաք հում սեր, որ շատ դիւրին կը խմորուի:

Շաքարեղէնները կ'աւրեն ակունները, կը յոգնեցընեն ստամոքսը և անօգուտ ճարպեր կը կազմեն: Չափաւոր կերպով տուէք նոյնիսկ անուշեղէնները, որոնք անվիճելիօրէն թանկագին ապաւէն են ձմեռուան համար:

Տղոց համար աղանդերի տիպարներ են չոր կարկանդակները, եփուած սերերը և քիչ շաքարոտուած մրգանոյնները:

Պտուղներու եղանակին մէջ բաւական տաւտօրէն տուէք կեւաս, դեղձ ու շատ հասած խաղող. բայց քիչ տուէք կամ բնաւ մի՛ տաք ելակ, սալոր և տանձ, որոնց համար ժողովուրդը կ'ըսէ թէ «ստամոքսը կը պաղեցնեն», և որոնք ստուգիւ անհանգիստ կ'ընեն մարտողութիւնը: Դորձեալ, ընդհանրապէս, աղայ մը պէտք չէ որ հում կամ խտկ բաներ ուտէ:

**ՓՈՐՀԱՐՈՒԹԻՒՆ**

Փորհարութիւնը մահացու է մանուսնդ փոքրերու, եթէ նկատողութեան չառնուի: Կերակուրը դիւրամարս. գառնուկի, հորթի միտի ջրով ապուր, բրբինձ, հաց, կաթ մինչեւ անցնի: Ասիս լաթիքի 5—10 կաթիլ գաւաթ մը ջրոյ մէջ: Բժիշկի դիմել լաւագոյն է:

**Հանրագիտակ**

**ՕՐԱՅՈՅՅԻ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ**

Հոկտեմբեր Յունուարի հետ միշտ միեւնոյն օր կը սկսի, Ապրիլն ալ Յուլիսի հետ, Դեկտեմբերը Սեպտեմբերի հետ, Փետրուար, Մարտ, և Նոյեմբեր միշտ միեւնոյն օր կ'սկսին, Մայիս, Յունիս և Օգոստոս միշտ տարբեր օրերով, այս նահանջ տարիի մէջ կը փոխուի: Դարագլուխը բնաւ չսկսիր չորեքշաբթի, ուրբաթ կամ շաբաթ օր, սովորական տարին միշտ սկսած օրով կ'աւարտի: Օրացոյցները 28 տարի միայն կը փոխուին, յետոյ նորէն առաջին տարիին յարեմանը կը կրկնուի մինչեւ 28րդ տարին:

**ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՏԱՐԵԴԱՐՁՆԵՐ (ԿԱՄ ՅՈՐԵԼԵԱՆ)**

- 1 տարի բամպակ
- 3 » կաշի
- 5 » փայտ
- 10 » անագ
- 12 » մետաքս և ընտիր քթան
- 15 » բիւրեղ
- 20 » յախճապակի
- 25 » արծաթ
- 30 » մարգարիտ
- 40 » զմրուխտ
- 50 » ոսկի
- 60 » ադամանդ

**ՃԱՐՈՆԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ**

Ճարոնի մէջ հետաքրքրական սովորութիւն մը կայ: Տղայ մը ծնելուն պէս, գիւղին կամ տան մէկ

կողմը ծառ մը կը անկուիս Այդ ծառը կը մնայ մինչեւ տղուն ամուսնութեան ժամանակ, կը կտրուի անոր ամուսնութեան օրը, ճարտար ատաղձագործ մը տան համար բան մը կը շինէ, և տան բոլոր կարասեաց կարեւորագոյնն ու նախամեծարը կը համարուի:

**ՉՈՒԹԻ ԾԱԳՈՒՄԸ**

Չութ ծամելը հայկական ծագում ունիս Ս. Թուրքոսի և Բարթողիմէոսի նահատակութեանց թուականէն ի վեր մինչեւ Աղեքսանդր Մակեդոնացին բացի հայերէն, ոչ ոք գիտէր անոր գոյութիւնը: Բուն իսկ Նաբոլէոնի արշաւանքէն ետքն էր որ ընդհանրացաւ անիկա և տաք ընդունելութեան արժանացաւ՝ օտար շրջանակներէ...



**ՄՏՔԻ ԾԱՂԻԿՆԵՐ**

\* \* Ատեն մը կ'ըսուէր թէ «Թագաւորի մը պէս երջանիկ է»: Այս ձեւը կորսուեցաւ Հիմա ալ կ'ըսեն թէ «Հարուստի մը պէս երջանիկ է»: Բայց այս ձեւն ալ պիտի կորսուի, և միշտ պիտի ըսեն. — «Պարտականութիւնը կատարող մարդու մը պէս երջանիկ, ընտանիքի մարդու մը պէս երջանիկ, բարերար մարդու մը պէս երջանիկ, ազատ մարդու մը պէս երջանիկ է»:

\* \* \* Սէրը շուտ կը պողի, եթէ չափազանցօրէն տաք է:

\* \* \* Ազատութիւնը չի բանտարկուիր և նոյնիսկ այն երկաթները զոր իրեն կը դարբնեն, երբեմն իր վեհապետութիւնը տարածելու կը ծառայեն:

\* \* \* Մարդիկ արիներէն կը պատկառին:

\* \* \* Գերեզմաններ առանց խաչի շուտ կը կորսուին, բարեկամներ առանց յիշատակի շուտ կը մոռցուին:

**Չուարք պատմութեան**

**ՄՈՄ ՍԱՏԱՆՍՅԻՆ ՊԱՏԿԵՐԻՆ ԱՌՋԵԻ**

Եկեղեցիի մը մէջ սաստնայի մը պատկերը կար, զոր Միքայէլ հրեշտակագետը կը գտնակոծէր: Պառաւ մը մօտենալով երկու մոմ վառեց: Քահանան զայս տեսնելով բարկացաւ:

— Տէր հա՛յր, ըսաւ պառաւը, ես ըրածս գիտեմ, ո՞վ գիտէ ես ո՞ւր պիտի երթամ, մարդ ամէն տեղ բարեկամներ ունենալու է:

**ՄԵՂՔԷ ԶՎԱԽՑՈՂ ԿԻՆԸ**

Յակոբ աղա իր կնոջը:

— Կնի՛կ հաւատա որ մեղք է այս գլխարկին 10 ոսկի տալ:

— Թող իմ գլխուս վրայ ըլլայ այդ մեղքը:

**ԻՐ ԹՇՆԱՄԻՆ ՍԻՐՈՂ ՄԱՐԴԸ**

— Գրաբոս աղա, քու մեծ թշնամիդ օղին է որ շատ փնաս կուտայ քեզի:

— Տէր հա՛յր, դուն անցեալ օր քարոզիդ մէջ չըսի՞ր որ, ձեր թշնամիները սիրեցէք:

— Օրհնած, սիրեցէք ըսի նէ, կլլեցէք չըսի ես:

**ԲՄՑ ԱԶՔԵՐՈՎ ԽՌԿԱՑՈՂ ՀԻԻԱՆԴԸ**

Բժիշկ մը առաւօտուն այցելութեան գնաց հիւանդ կնոջ մը, որոյ աղջիկն ալ հիւանդ պառկած էր նոյն սենեակին մէջ:

— Ի՞նչպէս անցուցիք գիշերը տիկին, հարցուց բժիշկը:

— Բոլոր գիշերը աչքս չգոցեցի, ըսաւ կինը դառնութեամբ:

— Իսկ դո՞ւք, աղջիկս, դուք ի՞նչպէս էիք գիշերը, հարցուց բժիշկը աղջկան:

— Բնաւ հանգիստ չկրցի քնանանալ, քանզի մայրիկը շարունակ կը խռկար, պատասխանեց աղջիկը՝

**ԳԵՂԵՑԿԱԳՈՅՆ ԲԱՆԸ ԱՇԽԱՐՀԻՍ ՄԷՋ**

Աշխարհիս մէջ գեղեցկագոյն բանը ի՞նչ է.—

Շուէտական լրագիր մը այս հարցումը ուղղած էր իր ընթերցողներուն, խոստանալով որ կարելի եղածին չափ քիչ բառով այդ հարցման յաջողապէս պատասխանողին մրցանակ պիտի որոշուի քննիչ յանձնաժողովի մը կողմէ։ 1025 պատասխանողներէն առաջին մրցանակը շահեցաւ երիտասարդ մը, որ գրած էր «Մօր աչքերը», երկրորդ մրցանակը շահեցաւ այն՝ որ գրած էր «Երազն այն սիրունիին որ հեռուն կը գըտնուի»։ Երրորդ մրցանակը տրուեցաւ անոր՝ որ գրած էր «Այն մարդը՝ որ մերկ սրունքներով՝ խոխոզուն գետէ մը կ'անցնի, զօքանչը գրկած»։

**ԴԵՓ ԴԵՂԻՆ ԵՂՈՂ ԱՄՈՒՍԻՆԸ**

Կինը.— Քեզի չարածճի, տեսնեմ այդ նամակը։

Այրը.— Ո՞ր նամակը, կնիկ։

Կինը.— Այն որ հիմա զրպանդ գրիր. վստահ եմ որ կին մը գրած է, հասցէին գիրը տեսայ, և դուն երբ կը կարդայիր դեփ դեղին եղար։

Այրը.— Յիրուի՞. առ կարդա՞. քու արդուզարդի առարկաներուդ հաշուեցոյցն է, որ ինծի զրկեր են վըճարելու համար։

**ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ**

— Ի՞նչ շատ կը ծխես, տղայ՝. մինչև և հիմա ծխախոտի առած դրամդ քովէ քով եթէ դրած ըլլայիր, տուն մը շինած կ'ըլլայիր։

— Դուն բնաւ չե՞ս ծխեր։

— Երբե՞ք։

— Այն ատեն, քու շինած տուներուդ հասցէները տուր նայիմ։

# Պատմական

## LUSH

ԳԼՈՒԽ Ա.

— Երրորդ կորգի ճամբորդներ, յառաջ եկէ՛ք։ Ահա առաջիկ, աիկի՛ն։ Այս կողմը շատ սեղ կայ։ Չէ՛, առաջիկ երրորդ կարգը չէ, առաջինն է։

Դուռները կը փակուին, սոյլ մը կը լսուի, և շոգեկառքը ճամբայ կ'ելլէ։

Կառախուժքին պետք՝ արդէն խճողուած մասնակառքէ մը ներս կը նետէ վաճառանոցի կողով մը, ծըրար մը, հովանոց մը, զոյգ մը սանդալ և խաւաքարտէ տուփ մը կէտ կէտ կապոյտ թաշկինակով մը կապուած։ Կապին մէջ խօթուած էր մարգարտածաղիկներու, բարձուեցնակներու և խնկունիներու փունջ մը, կողովին մէկ կողմը բարձրացած էր կարմրուկ խնձորներով ուրտնք զօրուար հոտ մը կ'արտարուէին։ Ծրարը ճիշդ տուփին վրայ կապուած թաշկինակին պէս էր, միտն թէ բաց դեղին գոյնով իսկ հովանոցը բաց կանտնչ բամպակէ շինուած ահագին բան մըն էր։ Դեռ ուրիշ բան ալ կա՞ր։ Ո՛հ, անտարակոյս. պառաւ կին մըն ալ կար որ այդ առարկաներուն մաս կը կազմէր, սակայն այն աստիճան պղտիկ էր այդ կինը, այնքան վախկոտ ձեւ մը և ընկճուած երեւոյթ մը ունէր, որ իր գոյքերուն քով ոչինչ կ'երեւար, և դիւրաւ աննշտարելի պիտի մնար անոր գոյութիւնը։ Կեցեր մնացեր էի ճիշդ այնտեղ ուր կառախուժքին պետք հրեր էր գինքը, ձեռքը բռնած գոյքերէն այնքան մաս մը որքան կրցեր էր պարակել, և ցնցուելով շարունակ շոգեկառքին շարժումէն, մերթ խոշոր որմնադիրի մը կը վարնուէր։

մերթ անոր կարմիր այտերով կնոջը որ ձիշդ իր դի-  
մացը նստած էր, մինչ իր չլացած և քթթուն ոչքերը  
մասնակառքին պատուհաններէն դուրս կը հեռուէին  
բոլոր ցանկերուն ու եզերքներուն որոնք կը սլանա-  
յին: Շունչը կը բռնուէր կարծես ամէն անգամ որ  
կամուրջի մը վրայէն կ'անցնէր շոգեկառքը, իբր թէ  
ալիք մը խուժած ըլլար իր վրայ: Իր ուղեկիցները  
նախ լուս կը դիտէին զինքը, սակայն շոգեկառքին  
մէկ յանկարծական ցնցումովը երբ գնաց ուժգին զար-  
նուեցաւ կնոջ մը, յետոյ որմնադիրին, անոր սեւ սըն-  
դուսէ գդակը ձեւագեղձելով, մարդը ըսաւ անոր.

— Մտիկ ըրէ՛ք, աիկին, թերեւս կրնաք ձեր ծը-  
րարներէն մէկ քանին սա նստարանին տակը դնել և  
քիչ մը աւելի տեղ բանալ ձեր շուրջը գտնուողներուն:  
Յետոյ իր կնոջը դառնալով յարեց.

— Քիչ մը օգնեցէ՛ք սա պառաւ կնկանը:

Ու անիկա սկսաւ ամենամեծ կորովով ու զուար-  
թութեամբ շտկուել կողովներն ու ծրարները:

— Ահա շտկուեցաւ, տյնպէս չէ՞. հիմակ ա՛լ կըր-  
նաք նստիլ: Տէ՛ր Աստուած, ինչո՞ւ կը վախնայ կոր  
այս կինը:

Որովհետեւ այդ աղմկայոյզ տեղաւորումները լըր-  
ջօրէն կը յուսահատեցնէին խեղճ կինը, կը վախնար  
որ մի գուցէ յանկարծական շարժումով մը շոգեկառ-  
քը տապալի, կամ իր անուշադիր մէկ վայրկեանին  
բան մը ձգէ ձեռքէն և կամ ինքը դուրս ինչայ թա-  
ւալգլոր, թումբին վրայ սլացող խուրձերուն կամ կա-  
ւիճի բեկորներուն պէս:

Առաջին անգամ սթափեցաւ իր վախէն որմնադի-  
րին փոքրիկ աղուն լալու ձայնը լսելով: Պատաւ կինը  
խեղոյն հովանոցը ձգեց ձեռքէն, և վաճառանոցի կո-  
ղովը առնելով խնձոր մը հանեց մէջէն ու լացող աղ-  
ղուն երկնցուց:



ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ  
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ  
ՕՐԱՑՈՅՅԸ  
1939

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Հրատարակութիւն  
ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՏՊԱԳՐԱՏԱՆ



Դիմել՝ 25, ՇԱՐԱ ԹԵՎԳԻՔ, ԳԱԼԻՐԻԷ  
Հեռախօս քիւ 57612

304

15677

# Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Վ Ա Ր Ձ Ա Տ Ր Ո Ւ Ա Շ Ի Ջ Մ Ի Ր Ե Ա Ն Յ Մ Ր Ց Ա Ն Ա Կ Ա Ի  
( 1 5 1 2 - 1 9 3 6 )

Սոյն գեղեցիկ գործը որ գնահատուած է Հայ եւ Օսար մամուլէն, բարձր անձնաւորութիւններէ, կը բաղկանայ 4 մեծադիր հատորներէ, 500 էջերէ, 91 կենսագրականներէ եւ 460 պատկերներէ, ձեռագրերէ եւ հետաքրքրական հազուագիւտ նկարներէ:

Կ'արժէ որ սոյն գործէն հաս մը ամէն ոք ունենայ իր սան մէջ եւ նուիրէ բարեկամներուն:

Գինն է մէկ եգ. Ոսկի. Արսասահման 20 Շիլին կամ 5 Տօլար, բոսք մեր վրայ:

Գիմել՝ Զարդարեան Գրատուն,  
Շարա Սիւլէման Փաւա Թիւ 31 Գահիրէ (Եգիպտոս):

## Ե. Ն Շ Ա Ն

Մ Ա Ս Ն Ա Գ Է Տ Լ Ո Ւ Ս Ա Ն Կ Ա Ր Ձ Ա Կ Ա Ն Մ Ե Բ Ե Ն Ա Ն Ն Ե Ր Ո Ւ  
Մ Ե Բ Ե Ն Ա Գ Է Տ Ե Ւ Ե Լ Ե Բ Տ Ր Ա Գ Է Տ

Ամէն անոնք որ լուսանկարչական մեքենայ մը ունին, պէտք է նաեւ ունենան հետեւեալ հասցին

### MAGHRABY No. 21

Կառուցում, նորոգութիւն, գնում եւ փոխանակութիւն  
դիւրամատչելի պայմաններով:

### Հ Ա Ջ Ա Ր Ո Ւ Մ Է Կ Գ Ի Տ Ե Լ Ի Ք Ն Ե Ր

Առայժմ լոյս կը տեսնէ երկու շաբաթը անգամ մը

Գինը՝	Պրակը ձեռքէ	1	Ե. Գ.
	10 " Եգիպտոս	10	"
	Արսասահման	15	Ֆրանկ
	Ամերիկա	1	Տօլար:

Վանառման Կեդրոնատեղիներ Գահիրէ՝ ՋԱՐԴԱՐԵԱՆ Գրատուն եւ  
Տպարան ՍԱՀԱԿ - ՄԵՍՐՈՊ

Հրատարակիչ՝ S. F. Consulian, Rue Ibn Matrouh No. 15,  
Shoubra, Cairo, Egypt